ԱՌԱՋԻՆ ՕԴԱԳՆԱՑՆԵՐԸ

Ավելի քան երկու հարյուր տարի առաջ՝ 1783 թվականի հունիսի 5-ին, Ֆրանսիայի Անոնե փոքրիկ քաղաքը հանկարծ հայտնի դարձավ ողջ աշխարհում: Ժոզեֆ և էտյեն Մոնգոլֆիե եղբայրներն առաջին անգամ օդ բարձրացրին իրենց կառուցած օդապարիկը:

Քաղաքի հրապարակում մարդկանց հոծ բազմութուն էր հավաքվել: Բոլորն էին ուզում տեսնել օդապարիկ կոչվող այդ «հրաշքը», որը շուրջ 15 մ տրամագծով քաքանե գունդ էր՝ լցված տաք ծխով: Դրսից սոսնձված էր թղթով: Ստորին մասում անցք էր բացված, որի անմիջապես տակը կախված էր «կրակարանը»: «Կրակարանի» մեջ եղբայրները դրել էին շիկացած ածխի կտորներ՝ տաքացնելու համար օդապարիկի ներսի օդը, որը, ընդարձակվելով, մասամբ դուրս էր գալիս թեթևացնելով օդապարիկը: Երբ կտրեցին պարանը, որով օդապարիկը կապված էր սյունից, այն վեր բարձրացավ և շուտով ծածկվեց ամպերի հետեում:

Մոնգոլֆիե եղբայրները հավաքվածներին առաջարկեցին թռչել օդապարիկով: Բայց թռչել ցանկացողներ այդպես էլ չեղան:

Մոնգոլֆիեներն, այնուհանդերձ, չհուսահատվեցին: Օդապարիկին կապված զամբյուղում նրանք տեղավորել էին ոչխար, աքլոր և բադ: Դրանք էլ հենց աշխարհում առաջին «օդագնացներն» էին, որոնք բարեհաջող վերադարձան Երկիր: